բարութեամբ։ Յայտնի չէ թէ որն է Սը-պրամի շինած զնորավանս ի գաւառին Սոդէից։

Ատրներսեհի աքսորը, կալով նորա անդ ամս բազումս, չի կրնար հինգ տարիէն աւելի ըլլալ։ Ստեփաննոս Օրբէլեան՝ Տաթեւի սահմանաց մասին վճռագրի մը ստորագրողներուն շարքին կը յիշէ նաեւ «Մեք Գրիգոր եւ Եսայի եւ Ատրներսեհ՝ Աղվանից իշխանք, վկայ եմք այսմ վճռի» (էջ 234)։ Ան կու տայ եւ թուականը Հայոց 355 կամ մեր 906ը։ Ուրեմն դերեզարձէն՝ 858էն՝ գրեթէ յիսուն տարի վերջ դեռ ողջ էր Ատրներսեհ։

Սահլի դարձին մասին վկայութիւն չը-կայ։ Պէտք է խորհիլ որ ան աքսորի մէջ մահացաւ։ Իր իշխանութեան գլուխը անցաւ Ատրներսեհ, որ 906ին դեռ ողջ էր եւ խաղաղութեան մէջ մնաւ։

Ատրներսեհի որդիներուն համար Կաղանկատուացիի շարունակողը կը վկայէ. «Լինին սորա (Ատրներսեհի) որդիք Գրիգոր եւ Ապուսէթ. Գրիգոր շինէ զՀաւախաղացի բերդն, եւ յայն կողմն ձգէ զձեռն իւրոյ իշխանութեանն» (էջ 389)։ Հաւախաղացի այժմ կը նոյնացուի Սագսրդանգալէսիի հետ եւ կը գտնուի Մեծիրանից վանքին դիմաց։ Պատմիչը կը շարունակէ. «եւ Գրիգորի լինին որդիք հինգ, յորոց երէց որդին Ապուլի սպանանի յաղդակցէն Սմբատայ» (անդ)։ Ապուլի սպանութեան մասին ինքն Կաղանկատուացին ալ կը վկայէ ըսելով. «Իսկ յետ չորից ամաց, յորում տարեմուտն ի սրբումն հանդիպէր Պասեքին. օր. սպանանի Պօլի (նոյն Ապուլի հետ։ Յ. Բ.) Ադուանից իշխանն Հայկազուն, (այսինքն Եռանշահիկ, Յ. Բ.) յիւրմէ հարազատէ ի Սմբատայ. եւ եղեւ այն սուղ մեծ իւրայնոց զարմից» (էջ 383)։

Ապուլի սպանութիւնը կատարուած է յետ չորից ամաց՝ այսինքն չորս տարի վերջ Գէորգ Գառնեցի կաթողիկոսին ձերբակալութենէն (արարներէն) եւ ազատութենէն, մօտաւորապէս 893–894 թուականին։ Ասկէ չորս տարի վերջ կ'ունենանք 897–8 թուականը, որ պատմիչին համաձայն Ապուլի սպանութեան թուականն է՝ իր տոհմէն կամ հարազատէն Սմբատէ իսկ կատարուած։

Ապուլի եղբայրը կամ Գրիգորի «միւս որդին Սահակ, որ եւ Սեւադայ կոչեցաւ, այր քաջ եւ յաջող, սա առհասարակ տիրեաց Գարդմանայ եւ Քաւսայ եւ Փառնայ գաւառաց, այլ եւ աւազակապետաց Զորագետոյն բովանդակ եղեւ իշխան, եւ խնդրող իսկ գրագիտութեան. եւ զդրպրապետս ի տան իւրում կարգեաց. ընդ որում եւ բազմաջան հնարիւք թագաւորն Հայոց Սմբատ մարտուցեալ ոչ ինչ կարաց ստերիւրել զնա ի կամս իւր։ Սեւադայ ծնանի զերկուս որդիս՝ զԳրիգոր եւ զԴաւիթ. Գրիգոր ծնանի զՍեւադայ, որոյ Իշխան անուն կոչիւր, եւ զԱտրներսեհ եւ զՓիլիպպէ։ Իսկ զերէց որդին իշխանին (Սեւադայի) զՅովհաննէս, որ եւ Սենեքերիմ կոչեցաւ, ընտրեաց զՆն Բարձրելոյն՝ կոչելով զնա ի թագաւորութիւն. եւ զվաղնջուց խափանեալ թագաւորութիւն Տէրն ամենակալ ի ձեռն նորա նորոգեաց, զոր եւ թագաւորն Պարսից մեծամեծ զարդուք պատուէ եւ տայ նմա զթագ հօր (Սահակ–Սեւադա) եւ զնորին երիվարն։ Ի նմին ամի եւ որ Յունացն էր Մագիստրոս՝ Դաւիթ կոչեցեալ անուն, թագ զարմանագան եւ ծիրանիս թագաւորական առաքէր ի պատիւ եւ ի զովեստ աստուածայալոյ առն այնորիկ, որ եւ ի ձեռն հայրապետական աջոյն առնոյր զօծումն թագաւորական ի փառս Քրիստոսի» (էջ 389–90)։

Նպատակ չունենալով մխրճուիլ այս իշխաններուն տոմարագրութեան մէջ՝ հոս այսքանով կը բաւականանանք։ Միայն յիշենք որ Յովհաննէս–Սենեքերիմ մեռաւ 1003ին եւ կը յիշուի իբր թագաւոր Փառիսոսի։

Գալով Սահակ (Սեւադայ)ի մասին, պատմիչը կը դրուատէ անոր գրագիտութիւնը եւ մատենասիրութիւնը։ Այս Սահակը յաղթուեցաւ Աշոտ Երկաթէն եւ 923ին կուրցուցին զինքը։